

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН	7
Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒՆ.....	22
Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES.....	22
Արգիշտի Վարդանյան - ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇՁԳՐՏՈՒՄ.....	23
Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ	29
Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY	29
Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲԼԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....	30
Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ.....	38
Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16 TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....	38
Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱԴԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՄԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	39
Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX	54
Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI" ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER.....	55
Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....	56
Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)	72
Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905).....	73
Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.	74
Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.....	82
Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S.....	83
Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....	84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.).....	89
Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994).....	89
Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	90
Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ.....	95
Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY	95
Լիլիթ Սալարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....	96
Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ).....	103
Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS)	103
Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ... 104	104
Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА.....	113
Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY	114
Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ).....	115
Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.).....	134
Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019).....	135
 ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY /	
Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	136
Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.)	146
Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY).....	147
Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՄԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ.....	148
Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.	155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարժապատկեր..... 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА..... 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES)..... 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅՆԸ..... 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI 176

Զահրա Մալեթի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI..... 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ.... 188

Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ..... 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ..... 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS” 205

Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՍՎԱԿՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА..... 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS..... 218

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)..... 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ)	229
Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH)	229
Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	230
Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ	236
Meri Hovhannisyana - FEATURES OF USING THE DEBATE METHOD	236
Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒՃԵՐՈՒՄ	237
Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА	246
Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES	246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՍԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:.....	247
ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՂԱԶԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:.....	247
ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԹԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:.....	250
ՆՈՐ ԳԻՐԵ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.)..	252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ.....	255
ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ.....	258

ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021).....	263
-------------------------------------	-----

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	266
INFORMATION ABOUT THE AUTHORS	267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	268
NOTICE FOR THE AUTHORS	268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	269
--	-----

Չահրա Մալեֆի

ՀԱՖԵՉԻ ԳԱՉԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՅ ՕՍՈՒԼԻԻ ԱԶԲԵՐՈՎ

Հիմնաբառեր. Ֆարահ Օսուլի, Հաֆեզի գազելները, «Վեներայի ծնունդը», «Լուսաբաց», «Դրախտ», «Ադամի արարումը», «Լուսին և արև», «Անցնելով երկնքից», «Իմ թռչուն, թո վանդակ»:

Իրանի ժամանակակից նկարչուհի Ֆարահ Օսուլին (ծնվ. 1953), ոգեշնչվելով պարսից դասական գրականությունից, իր ստեղծագործություններում արտացոլել է կնոջ էության սեփական ընկալումները: Տարբեր տեխնիկաների կիրառմամբ նա իր կտավներում մարմնավորել է տարբեր դարաշրջանների բանաստեղծների՝ Ֆիրդուսու, Հաֆեզի, Նիզամու, Ֆորուզ Ֆարուխպուրի, Սոհրաբ Սեփեհրիի և այլոց պոեզիան:

Մեր նպատակն է քննության առնել Հաֆեզի գազելներից ներշնչված նկարներից մի քանիսը («Վեներայի ծնունդը», «Լուսաբաց», «Դրախտ», «Ադամի արարումը», «Լուսին և արև», «Անցնելով երկնքից», «Իմ թռչուն, թո վանդակ»)՝ ցույց տալով 21-րդ դարի նկարչի և 14-րդ դարի բանաստեղծի խոհերի ընդհանրությունները: Օսուլին 4 տարվա ընթացքում կերտել է Հաֆեզի 50 գազելներից ներշնչված պատկերներ, որոնցից յուրաքանչյուրի համար հիմք է ծառայել Հաֆեզի մեկ գազելն ամբողջությամբ կամ դրա մի մասը, կամ էլ՝ մի տողը:

Ֆարահ Օսուլին Հաֆեզի գրականության միջոցով ձևավորեց իր արվեստի սեփական ոճը: Եվ քանի որ Հաֆեզի գազելները բազմաբովանդակ են, ուստի հարուստ ու բազմակողմ են նկարչի նկարները, որոնց ըմբռնումը երբեմն կարող է դժվար լինել սովորական դիտողի համար:

Իրանի ժամանակակից նկարչուհի Ֆարահ Օսուլիի (ծնվ. 1953) արվեստն արժանացել է մասնագետների բարձր գնահատականներին. «Ֆարահ Օսուլին իր գործունեության երեսուն տարիների ընթացքում կարողացել է մանրանկարչության միջոցով դրսևորել տեխնիկայի, կյութերի, բովանդակության և պատումի յուրատիպ համադրություն՝ ձևավորելով իր անհատական հատուկ ոճը»¹: Նա, օգտվելով պատկերային և գրական հարուստ մշակութային հենքից, կիրառելով ավանդական և ժամանակակից գործիքներ, իր նկարները վերածել է համաշխարհային ստեղծագործությունների: Նրա մի շարք կտավներ պահվում են աշխարհի կարևոր թանգարաններում և հավաքածուներում, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ի Մետրոպոլիտենի թանգարանում և Լոս Անջելեսի արվեստի թանգարանում:

Ֆարահ Օսուլիի բնութագրմամբ. «Իրանական մշակույթում բանաստեղծությունն ունի առանձնահատուկ նշանակություն, այն կենսական դեր է խաղացել իմ կյանքում՝ սկսած պատանեկան տարիներից»²: Նկարչուհու գործերում գրականությունը մշտական, համատարած և ընդգծված բաղադրիչ է: Ինչպես ինքը՝ արվեստագետն է բնորոշում. «Իմ սերը գրականության հանդեպ պատճառ է դարձել, որ նկարներում հանդես գամ որպես պատմիչ և փոխանցեմ պատմություններ»³:

Ֆարահ Օսուլին մանրանկարչության միջոցով, այն մատուցելով խոշոր չափերի վրա, ինչպես նաև կիրառելով ֆիգուրատիվ և մասամբ սյուրռեալիստական ոճ՝ կարողացել է արևելյան ոճի գեղանկարչությունը յուրատիպ տեխնիկայով շաղկապել արևմտյան ոճին:

* Հոդվածը ներկայացվել է 01.07.2021 թ., գրախոսվել՝ 09.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

¹ Աբբասայան Ասալ., Ֆարահ Օսուլի՝ «Ապրում եմ արեգակով», «Համշահրի» օրաթերթ, թիվ 1683, Թեհրան, 27.02.2013: عسل عباسیان. فرح اصولی. با آفتاب زنده ام. روزنامه همشهری. شماره 1683. تهران. 27.02.2013

² Օսուլի Ֆ., Վիրավոր շնորհը, «Շարդ» օրաթերթ, թիվ 2476, 22/12/2015, էջ 14:

فرح اصولی، "فضل زخمی"، روزنامه شرق، شماره 2476، 22/12/2015، صفحه 14.

³ Նկարչի հետ ունեցած պրոյեկտներից, 2018:

Նկարչուհին, ոգեշնչվելով պարսից դասական գրականությունից, իր ստեղծագործություններում արտացոլել է կնոջ եռության սեփական ընկալումները: Տարբեր տեխնիկաների կիրառմամբ՝ նա իր կտավներում մարմնավորել է տարբեր դարաշրջանների պոետների՝ Ֆիրդուսու, Յաֆեզի, Նիզամու, Ֆորուզ Ֆարոխզադի, Սոհրաբ Սեփեհրիի և այլոց պոեզիան:

Մեր նպատակն է քննության առնել Յաֆեզի բանաստեղծություններից ներշնչված նկարներից մի քանիսը՝ ցույց տալով 21-րդ դարի նկարչի և 14-րդ դարի բանաստեղծի խոհերի ընդհանրությունները: Օսուլին 4 տարվա ընթացքում կերտել է Յաֆեզի 50 գազելներից ներշնչված պատկերներ, որոնցից յուրաքանչյուրի համար հիմք է ծառայել Յաֆեզի մեկ գազելն ամբողջությամբ կամ դրա մի մասը, կամ էլ՝ մի տողը:

Եթե մեր օրերում հրաշքով վերակենդանանար Յաֆեզը, թերևս, հաճելիորեն զարմասար և ոգևորվեր 21-րդ դարի նկարչի կողմից իր տողերի մեկնաբանություններից ու տպավորություններից: Հայտնի է, որ Յաֆեզն ինքը հատուկ բժախնդրությամբ էր գրում իր գազելները և մեծ կարևորություն էր տալիս իր լսարանի կարծիքին: Ֆարահ Օսուլին լավագույն կերպով ցույց է տվել Յաֆեզի գազելների բոլոր մանր բաղադրիչները: Նկարչուհին անդրադարձել է Յաֆեզի բանաստեղծություններին և ամբողջովին կանացի հայացքով պատկերել դրանք արդիական հասարակության մեջ:

700 տարի է անցել Յաֆեզի ժամանակներից, և այս ընթացքում սակավաթիվ արվեստագետներ են փորձել պատկերների վերածել նրա գազելները, թերևս, այն պատճառով, որ Յաֆեզի բանաստեղծություններում օգտագործվող նյութերը ռեալիստական են, սակայն բովանդակությունը՝ սյուրռեալիստական, խորհրդավոր և շղարշված: Գաղտնիքներով և խորհուրդներով մշուշված բանաստեղծությունների պատկերման համար պետք է ամբողջ եռությամբ ընկալել նրա բովանդակությունն ու իմաստը: Յաֆեզի բանաստեղծություններն այնպիսին են, որ յուրաքանչյուր ընթերցող իր մտքում յուրովի է ըմբռնում ու մեկնաբանում դրանք: Կենսունակ ու ստեղծագործ միտքն է միայն կարող պատկերներով վերարտադրել այդպիսի բազմանշանակ բանաստեղծությունները: «Ֆարահ Օսուլին հիմնականում ստեղծում է այնպիսի պատկերներ, որոնց հիմքում ընկած է Յաֆեզի սերն առ Աստված և սիրեցյալի հանդեպ: Յաֆեզն իր բոլոր գործերում գովերգում է մարդուն, Աստծուն և սերը: Յաֆեզի խոսքը պատկանում է բոլոր ժամանակներին, նրա տողերը թեև գրվել են դարեր առաջ, սակայն ընկալելի, գրավիչ և կիրառական են նաև մեր օրերում և ժամանակակից մարդու համար»¹: Յաֆեզական մոտիվներով արված Ֆարահ Օսուլիի առաջին գործը վերաբերում է այս տողին՝ «Սիրահարի և սիրեցյալի միջև չկա ոչ մի պատվար

Հաֆի'յ, ինքը ես քեզ ծածկող շղարշը, պատռի՛ր այն մեջտեղից»:

«Վեներայի ծնունդը» նկարում տեսնում ենք ծածկող շղարշը կամ «հիջաբը», որի գաղափարը սերում է մանիքեական հավատալիքներից, համաձայն որի աշխարհը բաժանվում է երկու մասի՝ լույսի և խավարի: Եթե չլինի խավարը, լույսն իմաստ չի ունենա, և եթե լույսը չլինի, խավարը կկորցնի իր իմաստը: Ֆարահ Օսուլիի բոլոր նկարներում տեսնում ենք լույսն ու խավարը և ժամանակային խաղը (տե՛ս նկ. 1 և 2):

Ֆարահ Օսուլին վերարտադրել է Սանդրո Բոտիչելլիի (1445-1510) «Վեներայի ծնունդը» հայտնի կտավը: Օսուլիի նկարը բազմակողմ է, որտեղ հեղինակը հունական լեգենդը և Իտալիայի վերածննդի արվեստը նրբանկատորեն շաղկապել է Յաֆեզի գազելներից մեկի հետ՝ մատուցելով իրանական համադրությամբ: Դիտողի ուշադրությունը գրավող առաջին տարրը ժամանակի ոչ էական լինելն է՝ գիշերի և ցերեկի առկայությունը կողք կողքի: Թեև կոմպոզիցիան վերցվել է Սանդրո Բոտիչելլիի «Վեներայի ծնունդը» կտավից, սակայն մարմինների ձևը և վրձնի խազվածքներն արվել են իրանցի նկարիչ Ռեզա Աբբասիի ոճով, իսկ շրջանակների հերթագայությունն արված է իրանական գորգերի նմանությամբ: Շրջանակի երկու կողմերում նկարվել են արեգակի ծագումն ու մայրամուտը, ձախ կողմը բաց կապտա-

¹ Մորթեպա Կարդր, *Նկարչության գլանափաթեթներ, Համշահրի թերթ, թիվ 7689, 19 հունիս 2019, էջ 6: اصول نگارگری اصولی. مصاحبه کننده: مرتضی کارد. روزنامه همشهری. شماره 7689. 19 ژون 2019. صفحه 6.*

գույն է, իսկ աջ կողմը՝ մուգ մանուշակագույն: Նույն շրջանակի վերևի մասի աջ կողմում արևը պատված է ամպերով, ինչն ասոցացվում է Հաֆեզի գազելների՝ թաքնված խորհուրդների և այլաբանությունների հետ: Ձախ կողմի վերևի մասում պատկերված են բողբոջած ծաղիկներ՝ իրենց լիակատար գեղեցկությամբ, ինչպես նաև երևում են եղեգնանման բույսեր, որոնց կողքին հոսում է ջրառատ գետը՝ իր ափին բուսնած շահպրակ ծաղկով: Ասես՝ գիշերվա անդորր մենությունն է և ոգեշնչման այն վայրը, որտեղ առանձնանում էր Հաֆեզը և խորանում խոհերում՝ ստեղծելով իր գազելները: Հոսող գետը խորհրդանշում է ժամանակի և կյանքի՝ անցողիկ լինելը, որի մասին մշտապես մտորում էր Հաֆեզը:

Հաջորդ շրջանակում տեսնում ենք կանաչ դաշտ՝ կարմիր ծաղիկներով, որոնք մեղմորեն ձուլվում են երկնքին: Սա արտահայտում է Հաֆեզի բանաստեղծությունների՝ երկնային ու երկրային լինելու գաղափարը: Ներքևի կարմիր վարդը սիրո խորհրդանիշ է, իսկ կապույտ երկինքը մաքրության իմաստ է փոխանցում: Հայացքը սևեռվում է շրջանակի ձախ կողմում երկու ճերմակ աղավախների վրա, որոնք թևածում են երկնակամարում, ասես՝ սիրահար և սիրեցյալ զույգ լինեն, որոնց մասին այդքան խոսում է Հաֆեզն իր բանաստեղծություններում: Երկու սպիտակ աղավախներն արտահայտում են խաղաղության, փրկության, հարատևման և հավերժական սիրո խորհուրդը, պատկերված են ամպերով ծածկված արևի՝ ճիշտ հանդիպակաց կետում: Հաջորդ շրջանակում նկարված է սպիտակ ու նրբին ծաղիկներով ծածկված դաշտ, իսկ շրջանակի երկու կողմերում բարդիներ են երևում: Բարդին այն ծառն է, որ բազմիցս հիշատակվում է Հաֆեզի գազելներում: Բարդին հավաքվել ու կուչ է եկել այս հողեղեն աշխարհի անհավատարմության վախից և վեր սլացել դեպի երկինք: Այս ծառը տարբերվում է մյուս ծառերից նրանով, որ չունի դեպի գետին թեքված ու հակված ոչ մի ճյուղ, ասես՝ գիտի, որ հողեղեն այս աշխարհում ոչինչ մնայուն չէ:

Բոտիչելլի կտավում Վեներա աստվածուհին կանգնած է սադափի մեջ և երկու հրեշտակներ իրենց շունչն են փչում նրա վրա, մինչդեռ Ֆարահ Օսուլիի նկարում դիտողը նկարի բուն թեմային հասնելու համար պետք է անցնի ութ շրջանակներից, թևակոխի մի քանի փուլեր: Այստեղ ֆիգուրները կարմիր և մանուշակագույն են, որտեղից դուրս են եկել հրեշտակների թևերը: Շրջանակի ձախ կողմում իրար թևանցուկ արած երկու հրեշտակներն են:

*«Հրեշտակը չգիտի, թե ինչ է սերը, ո՛վ մատուցակ,
Մի գավաթ վերցրու՛ և վարդաջուր լի՛ց աղամորդու հողին»:*

Սա Հաֆեզի այս գազելի ամենաընտիր տողն է, որտեղ բանաստեղծը մարդուն վեր է դասում հրեշտակից, քանի որ հրեշտակը չգիտի՝ ինչ է սերը, բայց մարդը՝ գիտի: Անցնելով այս կարգերից՝ հասնում ենք ամենավերջին կարդին, այսինքն՝ Վեներայի արարման պահին, երբ հրեշտակն առաջ է եկել՝ նրան հանդերձանքով ծածկելու համար: Այստեղ տեսնում ենք զգեստով ծածկված կնոջը, ով իր հետ նախշազարդ կտոր է բերել և պարզել Վեներայի կողմը: Եթե ուշադրություն դարձնենք նրա ձեռքերի ձևին, կնկատենք, որ կնոջ ձեռքը օղակել է տղամարդ հրեշտակի գոտին, ինչպես նաև կտեսնենք նրա երկու մատների ձևը, որ խորհրդանշում է Քրիստոսին, այսինքն՝ կտավում կարելի է տեսնել նաև Քրիստոսի ներկայությունը: Վեներայի հագուստը խորհրդանշում է այն բողբոջածկույթը կամ «հիջաբը», որի մասին հաճախ խոսում է Հաֆեզը (կամ էլ կարելի է մեկնաբանել որպես՝ աստղազարդ գիշերվա տեսքով հիջաբ)¹:

*«Լուսաբաց» նկարի (տե՛ս նկ. 3) հիմքում ընկած է Հաֆեզի հետևյալ տողը՝
«Երեկ գիշեր, լուսաբացին վիշտ ու ցավից ինձ փրկեցին,
Եվ խավարում անմահական ջրով հոգիս մկրտեցին»:*

Բանաստեղծությունը պատկերավորվել է քառակուսի շրջանակի ձևաչափում, որպեսզի այս կոմպոզիցիան ամրություն, կայունություն և հաստատականություն հաղորդի: Քառակուսի կարդն ուղղահայաց քառանկյան միջոցով բաժանվել է երկու մասի: Առաջին

¹ Մարասի Մ., Տեքստի և պատկերի կոմպոզիցիայի ինչպիսությունը, *Նեգարեի հանդես, թիվ 23, Թեհրան, Շահեդ համալսարանի հրատ.*, 2014, էջ 13:

مراسی م.، ترکیب متن و تصویر، مجله نگاره، انتشارات شماره 23 صفحه 13. دانشگاه شاهد، تهران، 2014.

շրջանակում տեսնում ենք կանաչագույն և դեղին լաբաներ: Այս թեփուկաձև և դողողացող ռիթմը դիտողին փոխանցում է երազային զգացողություն, որ կրկնվում է Ֆարահ Օսուլիի բոլոր գործերում: Գլխավոր շրջանակում տեսնում ենք իրեն՝ Յաֆեզին, ով քայլում է կրակի լեզվակների միջով, իսկ շրջանակի վերևի հատվածից ներս են եկել հրեշտակները: Յաֆեզի գազելում ասվում է, թե երեկ գիշեր, երբ քնած էին բոլորը, իսկ բանաստեղծն արթուն էր, դրախտից լուր հասավ, որ ընդունի՛ր, սա՛ է իրողությունը, և թո՛ւյլ տուր, որպեսզի տիեզերքի էներգիան հորդի քո մեջ¹: Յաֆեզի բանաստեղծական աշխարհը բազմակողմ է, ինչը և Օսուլիի նկարներում դրսևորվում է բազմաշրջանակ կոմպոզիցիայով, այսինքն՝ շրջանակների կիրառմամբ՝ մի քանի տարբեր ժամանակներ ցուցադրվում են մեկ կտավի վրա: Իրանների կոմպոզիցիայում նկատում ենք, որ Յաֆեզի ձեռքերը հրեշտակների ձեռքերում են, իսկ նրա ոտքերն առաջ են անցել, բայց հայացքն ուղղված է դեպի ետև: Հրեշտակներից մեկը բռնել է Յաֆեզին և դուրս է քաշում կրակից: Յաֆեզի հագին կապտագույն հագուստ է, իսկ նրան մոտեցած առաջին հրեշտակի զգեստը դեղին ու կապույտ է: Ձեռքին գավաթ բռնած հրեշտակը հագել է կապույտ շապիկ և մի կանաչ վզկապ բռնել ձեռքին: Մյուս հրեշտակի ձեռքին էլ գավաթ կա, որը պետք է մատուցվի Յաֆեզին ամենավերջում, որով պետք է արբենա բանաստեղծը և վերանա ինքն իրենից:

Քննում ենք Յաֆեզի այս հայտնի տողը մեկ այլ գազելից՝
*«Բացեիրաց ասում եմ և վկարթասիրտ եմ իմ ասածից՝
Սիրո ծառան եմ ես և ապատ եմ երկու աշխարհներից»:*

Յաֆեզը հայտարարում է, որ սիրահարվել է և դրանով իսկ ազատվել երկրային ու երկնային աշխարհների կապանքներից: Ֆարահ Օսուլին, ներշնչված այս գաղափարով, նկարել է իր կտավներից մեկը: «Դրախտ» կտավի (տե՛ս նկ. 4) վերին մասում պատկերված են երկու աղավախներ, որոնք մարմնավորում են ազատություն, խաղաղություն, փրկություն և սեր: Աղավախները թևածում են ծառերի վերևում: Կտավի վրա յուրահատուկ կերպով պատկերված են ջրվեժ, բարդի ծառ, լեռ և ծաղկապատ դաշտ, որոնք ներդաշնակ գունավորում ունեն և դիտողին փոխանցում են ուրախ ու երջանիկ աշխարհի զգացողություն: Շրջանակի առաջնամասում տեսնում ենք Յաֆեզին ու նրա սիրեցյալին, որոնք իրար սեր են խոստովանում: Այս տեսարանն արտացոլում է գազելի այն միտքը, որ թեև բանաստեղծը գտնվում է այս աշխարհում, սակայն, ասես՝ դրախտում լինի, քանի որ սիրահարված է: Սիրեցյալի ձեռքին կա կարմիր խնձոր, որն ասոցացվում է Եվայի խնձորի, մարդու գայթակղության և դրախտից Ադամի ու Եվայի արտաքսման պատմության հետ: Յաֆեզն էլ իր գազելում ասում է՝ *«Ես հրեշտակ էի և դրախտն էր սկզբում իմ բնակավայրը...»:* Ընդհանրապես՝ այս գազելի մեկնաբանությունը շատ բարդ է և պետք է հաշվի առնել շատ իրողություններ, սակայն նկարիչն այն արտացոլել է պարզ ձևով: Կապույտ երկինքը մարմնավորում է խաղաղությունը, ֆիգուրները նկարված են շատ պարզ: Որքան իջնում ենք դեպի շրջանակի ստորին մասը, այդքան ավելի շատ են կուտակումները և առավել ընդգծված՝ գույները: Ներքևի հատվածի գույնզգույն լինելը խոսում է այս հողեղեն աշխարհի խաբկանքներից ու գայթակղություններից: Նկարի վերին հատվածում թռչունների, ծառի և երկնքի պատկերմամբ՝ գերիշխում է հանդարտության մթնոլորտը: Գազելի վերջին տողում ասվում է՝ *«Մաքրիր.....»*, որը նկարում իր արտահայտությունն է գտել գետի պատկերով. գետը խորհրդանշում է Յաֆեզի արցունքները: Դրանք թափվում են՝ աշխարհը վատից մաքրելու համար: Եթե ուշադիր նայենք գետին, կտեսնենք, որ այնտեղ նկարված ամեն մի գիծ նմանվում է արտասուքին, իսկ արցունքը նկարի ամենամաքուր տարրն է:

Ահա և Յաֆեզի մեկ այլ գազել՝ *«Այս արյունը, որ այլե՞ծիում է քո սրտում... »:*

Յաֆեզն այս գազելում ասում է, որ եթե դու առաջ շարժվես սիրով, ապա կտեսնես այնպիսի բաներ, որոնք նախկինում չէիր ըմբռնում:

¹ Երբ Յաֆեզն ասում է երեկ լուսաբացին, նկատի ունի օրվա ամենամթին ժամը, քանի որ ճիշտ արևածագից առաջ խավարը լիակատար է լինում, և ամենուր իշխում են լռությունը և սառնությունը: Այդ պահին հանկարծ ծագում է արևը, և տիեզերքի ամբողջ ոգեշնչումը վարարում է նրա հոգում:

Ֆարահ Օսուլին իր «Ադամի արարումը» նկարի (տե՛ս նկ. 5) կոմպոզիցիան վերցրել է Միքելանջելոյի հռչակավոր «Ադամի արարումը» ստեղծագործությունից (տե՛ս նկ. 6): Առաջին շրջանակի երկնականարում նկարված են աստղ և ամպ, իսկ երկրորդ շրջանակում լեռ և գետ: Հաջորդ շրջանակում տեսնում ենք Ֆարահ Օսուլի գործերում բազմիցս հանդիպող երանգը՝ մանուշակագույնը, իսկ երկնքում թևածում են ութ թռչուններ: Կենտրոնական շրջանակում նստած ֆիգուրին մոտենում է երկնքից իջած հրեշտակը. նրան ուղղորդում են մանուկ հրեշտակները: Մարմինները նկարված են ճիշտ այնպես, ինչպես Միքելանջելոյի գեղանկարում են: Միքելանջելոյի ստեղծագործության մեջ (ճիշտ ինչպես Հաֆեզի գազելում) ներկայացվում է մարդու արարման պահը՝ իր ողջ գեղեցկությամբ, որն սկիզբ է առել սիրուց: Ֆարահ Օսուլին պատկերում է գեղեցկությամբ և նրբությամբ շաղախված սիրո արարումը, որից նույնիսկ կարծր ժայռի վրա ծաղիկ է բուսնում: Այստեղ վրձնի խազվածքներն ու գույները բավական համարձակ են, առկա են գույնի և եսթիզի մի քանի տիրույթներ, միջավայրերն իրարից անջատելու համար օգտագործվել են տարբեր կառույցներ: Ֆարահ Օսուլին, իհարկե, կարող էր ամեն ինչ պատկերել ճիշտ և ճիշտ Միքելանջելոյի պես՝ նկարը մատուցելով մեկ շրջանակում, սակայն Հաֆեզի աշխարհայացքից ներագրված՝ նա բուն կադրին մոտենում է աստիճանաբար՝ գալով գիշերից դեպի ցերեկ և արտաքին շրջանակից դեպի ներքինը՝ հետզհետե մոտենալով հաֆեզական աշխարհին: Ֆարահ Օսուլին համարձակվել է իր ստեղծագործության ենթահողը վերցնել Միքելանջելոյից, իսկ Հաֆեզից առնել նրա գինու գավաթը, որպեսզի ստեղծի արվեստի մոդեռնիստական գործ: Նրան հաջողվել է իրանական կերպարվեստի որոշ տարրերը ներմուծել և զարգացնել մոդեռն միջավայրում:

«Լուսին և արև» պատկերը (տե՛ս նկ. 7 և 8) կերտված է Հաֆեզի գազելի հետևյալ տողի հիման վրա՝ «Մեր ակնարածության* վրա անգետները շվարած են,

Մենք այնպես ենք, ինչպես որ կանք, ինչ ուկում են թող մտածեն»¹:

Այս կոմպոզիցիայով առաջին նկարը Սուլթան Մոհամմադ Նադաշինն (1477-1555) է, որը ցույց է տալիս իսլամի մարգարեի համբարձվելը երկինք: Իսլամական կերպարվեստում սրբերին նկարելիս դեմքը պատկերվում էր լույսով ողողված՝ լուսապսակը գլխին:

Ֆարահ Օսուլիի շատ գործերում, որոնք ներշնչված էին հաֆեզյան մոտիվներով, պատկերված է սիրահարի և սիրեցյալի կապը, սակայն այլ է վերը նշված նկարի թեման: Ամբողջ նկարը երիզված է կարմիր շրջանակով, որից հետո հասնում ենք կապույտ ենթակադրին, որտեղ և նկարված են երկու հրեշտակներ: Ներքևում կան երկրաչափական ձևեր՝ կապույտ, դեղին և մանուշակագույն, որոնց մեջտեղում նկարված է կապտագույն ջրավազան՝ բազմաթիվ աստղերի արտացոլանքով: Ճիշտ շրջանակի կենտրոնում պատկերված է ձի՝ իր հեծյալով: Հեծյալի դեմքը չի երևում, ծածկված է: Հրեշտակի ոտքերի ներքևում՝ կապույտ համապատկերում, նրբորեն նկարված են կրակի լեզվակները: Կադրի ներքևում հասնում ենք ծաղկաշատ դաշտին: Նկարում ոտքերը չեն հասնում գետնին, հեծյալի ձեռքում գիրք է դրված, իսկ գլխի շուրջ՝ լուսապսակ: Աջ կողմի հրեշտակը ծածկված է կարմիրով ու դեղինով: Դեղինը խորհրդանշում է հոգևորը, վեհ մտածողությունը և սրբությունը, իսկ կարմիրը՝ սեր և վստահություն: Շրջանակի ձախ կողմում հրեշտակի զգեստը կապույտ և մանուշակագույն է, որոնք խորհրդանշում են խաղաղությունը: Աջ կողմի հրեշտակի ձեռքում լուսինն է հայտնվել, իսկ ձախ կողմի հրեշտակն իր ձեռքում պահում է արևը: «Ասես լուսինն ու արևը փոքրացել և հրեշտակների ձեռքերով նվիրվում են կենտրոնում կանգնած անձնավորությանը: Վերևից ամպերը հյուսվել են իրար և անձրևում են հրեշտակների ոտքերի տակ երևացող կրակի վրա: Ձին սրճագույն է և իր մեջքին կրում է միստիկ մի անձնավորություն: Սրճագույնը բնության գույն է և փոխանցում է ուժի և վստահության զգացողություն»²:

¹ Մաթյան Ա., Հաֆեզ Գազելներ, թարգմանությունն բնագրից, Սպահան, «Թահդիդաթե Նապարի» հրատ., 2007, էջ 190: (*Ա.Մաթյանի ընտրած այս բառը կարելի է թարգմանել նաև «հայացքների խաղ», ինչպես բնագրում՝ թարգմանիչ է.Ա): .تعداد كل صفحات 190. صفحه 2007. اصفهان. نظری. انتشارات تحقیقات نظری. اصفهان. 2007. الف ماتیان. غزلیات حافظ. انتشارات تحقیقات نظری. اصفهان. 2007. صفحه 190. تعداد كل صفحات 190.

² Մոսայեթ Օսթովար, Գույն, Թեհրան, Փարս Բյուր հրատ., 2012, էջ 64:

مسیب استوار. رنگ. انتشارات پارس بیوک تهران. سال 2012. صفحه 65. تعداد صفحات 96.

Կենտրոնական շրջանակում նկարված է կապույտ առաստաղ՝ պարզ ու աստղաշատ երկնքով: Այս բոլոր բաղադրիչները վկայում են հոգևոր մարդու ներկայության մասին, ում շնորհիվ հրեշտակներն իջել են, որպեսզի նրան փրկեն երկրային կրակից: Ֆարահ Օսուլին իրականում պատկերում է այն, ինչ գրված է Հաֆեզի այս գազելում՝

*«Խելքներն են սեր գոյության կենտրոնակետը կարկինի
Սերը գիտի, սակայն, որ այս շրջագծում մոլորված են»¹:*

Հաֆեզն ասում է՝ եթե չճանաչես ու չիմանաս սերը, կմոլորվես այս աշխարհի շրջապտույտում: Նկարի կադրի կենտրոնական ֆիգուրը ճիշտ և ճիշտ կարկինի կենտրոնական կետն է: Ընդհանուր առմամբ՝ մարդու համար ամենակարևոր սկզբունքը խելքն ու միտքն է, ռացիոնալիզմը, սակայն գազելի երկրորդ տողում բանաստեղծն անմիջապես ավելացնում է, որ սերը, այնուամենայնիվ, առավել բարձր է խելքից²: Օսուլին նկարում է այն մարդուն, ով, ըստ Հաֆեզի, հեծնել է խելքի ու մտքի թամբին, բայց գնում է սիրո ճանապարհով: Նկարում արևի և լուսնի առկայությունն ակնարկում է նույն գազելի մեկ այլ տողում նշված սիմվոլները. «Նրա չքնաղ դեմքը միայն իմ աչքերը չի շլացնում,
Արեգակն ու լուսնակն էլ նրա լույսի մի առկայծն են»³:

Այսինքն՝ արևն ու լուսինն էլ վկայում են Հաֆեզի սիրո մասին: Այդ իսկ պատճառով արվեստագետն իր այս կտավում պատկերել է այս երկու սիմվոլը:

*«Իմ կրծքի տակ թաքնված այս կրակից
Արևը բոցավառվեց երկնականարում»:*

Օսուլիի «Անցնելով երկնքից» նկարում (տե՛ս նկ. 9) տեսնում ենք կապույտը, կանաչը և մանուշակագույնը, իսկ արևն ու կրակի բոցերը ջերմացնում են կադրի մեջտեղում գտնվող Հաֆեզին: Հաֆեզը, ծի հեծած, ընկղմված է անսկիզբ ու անվերջ աշխարհում: Ձին առաջ է վազում, բայց Հաֆեզի հայացքն ուղղված է իրեն պատած կրակին: Գազելի հաջորդ տողում Հաֆեզն ասում է, թե արևը երկնքում բռնկված բոց է: Օսուլին խորագիտությամբ այդ հրո արևը նկարել է շրջանակի վերևի մասի աջ կողմում: Հաֆեզի գլխի հետևում նկարված շրջանակը նախազարդվել է կանաչ բնությամբ և փարթամ բույսերով: Ձախ կողմի անկյունում տեսնում ենք սպիտակ գույն, որ հանդարտություն և հանգստություն է խորհրդանշում:

Օսուլիի կտավներից շատերում գլխավոր շրջանակի կամ կադրի երկու կողմերը դատարկ են, բոլոր իրադարձությունները տեղի են ունենում մեջտեղի շրջանակում: Երկու կողմերի շրջանակները մատնանշում են անցյալը և ապագան, մինչդեռ մեջտեղի շրջանակը նշանավորում է ներկան, որտեղ կան ծառ, բողբոջ, սիգամարգ, գետ, գունավոր գեղեցիկ շրջապտույտ՝ այնպիսի բնություն, որ դուր է գալիս դիտողի սրտին ու հոգուն: Պատկերի վերևի հատվածում տեսնում ենք շղթայանման ամպեր. շղթան միավորում է մարդու ներկան և անցյալը: Մեջտեղի շրջանակում նկարված են Հաֆեզը և Նրա սիրեցյալը, որոնք Նստած են սևաթույր ձիու վրա և անցնում են այս ուղով: Ձին իրանական մշակույթում խորհրդանշում է հպարտություն և համարվում մարդու թռիչքի թևերը⁴:

«Իմ թռչուն, թո վանդակ» նկարի (տե՛ս նկ. 10) կոմպոզիցիան ներշնչված է իրանական պարտեզների ճարտարապետությունից՝ այգու մեջտեղում տեղադրվող ջրավազան, որից դուրս են գալիս առվի խաչաձև թևերը և ձգվում դեպի այգու գլխավոր կողմերը: Իրանական

¹ Հոսեյն Եսմասի, Պարսկական Եպիկական գրականության ակդեցությունը իրանական գեղանկարչության վրա, գառուն 2009, համար 15, Թեհրան, Ֆարհանգեսթան հրատ., էջ 107-114:

حسین عصمتی. تاثیر ادبیات حماسی فارسی بر نگارگری ایرانی. مجله گلستان هنر. شماره 15. بهار 2009. تهران. انتشارات فرهنگستان هنر جمهوری اسلامی ایران. تهران. صفحه 113. صفحات 107-114.

² Էբրահիմի Դինանի Ղ., Խելքի դավթարը և սիրո այաթը, Թեհրան, «Թարիե Նո» հրատ., 2011, էջ 64:

غلامحسین ابراهیمی دینانی. دفتر عقل و آیت عشق. تهران انتشارات طرح نو. 2011 جلد اول. صفحه 64. تعداد کل صفحات 444.

³ Կամրան Աֆշարմաժ, Իրանցի նկարիչ և մոդեռնիզմ, Թեհրան, Արվեստի համալսարանի հրատ., 2012, էջ 196:

کامران افشارمهاجر، هنرمند ایرانی و مدرنیسم، تهران، 2012. انتشارات دانشگاه هنر. صفحه 196. تعداد کل صفحات 300.

⁴ Սալեհիուր Չեյնաբ, Ձին իրանական մշակույթում, Ֆարհանգ հանդես, 4-րդ համար, Թեհրան, 2008, էջ 157, 155-162: زینب پورصالح. اسب در فرهنگ فارسی. فصلنامه نجوای فرهنگ. شماره 4. تهران 2008. انتشارات سروش. صفحه 157. صفحات 155-162. 155 تا 162

այգիներում կամ պարտեզներում ջրավազանի վրա կառուցվում էր պատշգամբ, որը կոչվում էր թագավորանիստ, այդտեղից գեղեցիկ տեսադաշտ էր բացվում դեպի ավազանը և ողջ այգին: Ֆարահ Օսուլին իրանական այգու ամբողջ միջավայրը ներկայացրել է ամենայն պարզությամբ և ամբողջապես մինիմալիստական ձևով: Շրջանակի երկու կողմից ձգվող ջրի ճյուղավորումը մեղմացրել է մեջտեղի շրջանակի տաք գույները: Նախորդ նկարի պես այս կտավն էլ բաժանված է երեք ուղղահայաց քառանկյունու: Շրջանակի մեջտեղի քառանկյունին բաժանվել է երեք քառակուսու, որոնցից յուրաքանչյուրն առանձին շրջանակ է: Այս պատկերների կոմպոզիցիան նմանվում է Փիթ Մունդերիանի (1872-1944) նկարներին, ով ուղիղ գծերը և հատուկ գույները ցույց է տալիս հստակությամբ և կանոնավոր կերպով, ինչպես գիտական օրենքները կամ մաթեմատիկան¹:

Այսպիսով՝ քանի որ Չաֆեզի գազելները բազմաբովանդակ են, ուստի հարուստ ու բազմակողմ են կերտվում նկարչի նկարները, որոնց ըմբռնումը երբեմն կարող է դժվար լինել սովորական դիտողի համար: Ավելի նպատակահարմար է նախ ծանոթանալ Չաֆեզի բանաստեղծություններին, այնուհետև հաղորդակցվել այս կտավների հետ: Ֆարահ Օսուլին Չաֆեզի գրականության միջոցով ձևավորեց իր արվեստի սեփական ոճը: Նա երբեք չկարողացավ իր կտավներում բացառել գրականության ներկայությունը: Չաֆեզն ասում է, «որ իր խոսքը սիրո, յարի և սիրեցյալի մասին է, դրանք իր համար միջոց ու պատրվակ են՝ խոսելու Աստվածային սիրո մասին: Չաֆեզի համոզմամբ՝ մինչև մեկը չփորձի և չճաշակի երկրային սերը, չի հասկանա աստվածային սերը»²: Երբ արվեստագետը դիմում է Չաֆեզի պես բանաստեղծին, բացահայտում է հարուստ գրականություն, որն ընդգրկում է ոչ միայն անհատի հույզերն ու ապրումները, այլև տարածվում է ամբողջ մարդկության վրա: Սա է պատճառը, որ հաֆեզական մոտիվներով ստեղծված գործն ինքն իր հերթին է հարստանում:

Ինչ վերաբերում է շրջանակների մեջ տեղավորվող կոմպոզիցիային կամ նկարում բանաստեղծական տողի կիրառմանը և իմաստներին, պետք է ասել, որ այս հնարքը նա վերցրել է իր ժամանակակից արվեստագետներից: Ֆ. Օսուլին բոլոր միջավայրերում դրսևորում է սեփական հայացքները և մոտեցումները, և ծնվում են Չաֆեզից ոգեշնչված նկարներ: Բոլոր կտավներում վրձնի խազվածքները, շրջանակներն ու կադրերը և դրանց նրբությունը նման են իրար, սակայն հանդես են բերում տարբեր իմաստներ ու խորհուրդներ:

Չաֆեզն իր դարաշրջանի բանաստեղծ էր և խոսում էր այդ ժամանակի լեզվով ու արտահայտչամիջոցներով, իսկ Ֆարահ Օսուլին հաֆեզական դարն ու աշխարհը ներմուծեց արդի արվեստի ստեղծագործությունների մեջ և իր կանացի ներաշխարհ:



Նկ. 1. **Ֆարահ Օսուլի**, «Վեներայի ծնունդը», 2007 և 2008, Էյրբրաշ և գուաշ ստվարաթղթի վրա, 76×110:

¹ *Գամբրիջ Էրնեսթ, Չամաշխարհային արվեստի պատմություն, թարգմ.՝ Ռամոն Ալի, Թեհրան, 2009, էջ 571: արنست گمبیرج. هنر مدرن. مترجم علی رامین. نشر نی. تهران سال 2009 صفحه 571. تعداد صفحات 684.*

² *Չոշանգ Երթեհաջ, Չաֆեզ, Թեհրան, 2008, էջ 102, 350:*


هوشنگ ابتهاج. حافظ. انتشارات طرح نو. 2008. تهران. صفحه 103. کل صفحات 350.



Նկ. 2. **Սանդրո Բոտիչելլի**, «Վեներայի ծնունդը», 1486, Տեմպերա կտավի վրա, 172×278.9, Ուֆֆիցի պատկերասրահ, Ֆլորենցիա:



Նկ. 3. **Ֆարահ Օսուկի**, «Լուսաբաց», 2008, Էյրբրաշ և գուլաշ ստվարաթղթի վրա, 76×76, Devi Art Foundation, Նյու Դելի, Ջնդկաստան:



Նկ. 4. **Ֆարահ Օսուկի**, «Դրախտ», 1999, Էյրբրաշ և գուլաշ ստվարաթղթի վրա, 76×76, Իմամ Ալի թանգարան, Թեհրան, Իրան:



Նկ. 5. **Ֆարահ Օսուլի**, «Ադամի արարումը», 2008, Էյրբրաշ և գուաշ ստվարաթղթի վրա, 110×76, մասնավոր հավաքածու, Թեհրան, Իրան:



Նկ. 6. **Միքելանջելո**, «Ադամի արարումը», 1500, 280×570, Սիբատոյան կապելլայի առաստաղի որմնանկարը, Վատիկան, Իտալիա:



Նկ. 7. **Ֆարահ Օսուլի**, «Լուսին և արև», 1999, գուաշ ստվարաթղթի վրա, 76×76, Իմամ Ալի թանգարան, Թեհրան, Իրան:



Նկ. 8. **Սոսկթան Մոհամմադ**, «Մարգարեի համբարձումը, Խամսեի Թահմասբի», 1539-1543, Ջրաներկ և թանաք թղթի վրա, 28.7×18.6, ներկայումս գտնվում է Լոնդոնում, Մեծ Բրիտանիա:



Նկ. 9. **Ֆարահ Օսուլի**, «Անցնելով երկնքից», 2002, 76×65, Էյրբրաշ և գուաշ ստվարաթղթի վրա, մասնավոր հավաքածու, Թեհրան, Իրան:



Նկ. 10. **Ֆարահ Օսուլի**, «Իմ թռչուն, քը վանդակ», 2003, 76×76 Էյրբրաշ և գուաշ ստվարաթղթի վրա, մասնավոր հավաքածու, Թեհրան, Իրան:

Захра Малеки, ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ. Современная иранская художница Фарах Оссули (1953 г. рожд.), вдохновившись классической персидской литературой, воплотила в своих произведениях собственные восприятия женской сущности. Применяя разные техники, она отразила в своих полотнах поэзию принадлежащих к разным эпохам поэтов, таких как Фирдуси, Хафиз, Низами, Фору́г Фаррохзад, Сохраб Сепехри и другие.

Нашей целью является, путем анализа некоторых из картин, написанных на основе газелей Хафиза («Рождение Венеры», «Рассвет», «Рай», «Сотворение Адама», «Луна и солнце», «Пересекая небо», «Моя птица, твоя клетка»), выявление общности мыслей художника XXI века и поэта XIV века. За 4 года Оссули создала картины, вдохновленные 50-ю газелями Хафиза, для каждой из которых основанием служила одна газель – полностью, частично или даже единственной строкой.

Творчество Хафиза способствовало формированию художницей Фарах Оссули своего собственного стиля в искусстве. И поскольку газели Хафиза чрезвычайно содержательны, многогранны, содержательны также и созданные Оссули картины, не всегда, однако, с легкостью воспринимаемые обычным зрителем.

Ключевые слова: Фарах Оссули, газели Хафиза, «Рождение Венеры», «Рассвет», «Рай», «Сотворение Адама», «Луна и солнце», «Пересекая небо», «Моя птица, твоя клетка».

Zahra Maleqi, HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI. The contemporary Iranian artist Farah Ossuli (born 1953), being inspired by classical Persian literature, has embodied in her oeuvre her own perception of a woman's essence. Employing various techniques, she reflected in her canvases the work of poets coming from different eras, including Firdausi, Hafez, Nizami, Forugh Farrohzad, Sohrab Sepehri, and others.

Our goal is, through analysis of some of the pictures, encouraged by Hafez's gazelles ("The Birth of Venus", "Dawn", "Paradise", "The Creation of Adam", "Moon and Sun", "Crossing the Sky", "My Bird, Your Cage"), to define the commonalities of thoughts between a 21st century artist and a 14th century poet. During 4 years, Ossuli had created canvases inspired by 50 gazelles of Hafez, each of them drawing on one gazelle – in full, in part, or even on a single line.

Hafez's oeuvre contributed to the formation of Farah Ossuli's own style in art. The outstandingly meaningful gazelles, created by the poet, facilitated the creation of no less meaningful and multifarious paintings, however, not always easily perceived by an ordinary spectator.

Keywords: Farah Ossuli, Hafez's gazelles, "The Birth of Venus", "Dawn", "Paradise", "The Creation of Adam", "Moon and Sun", "Crossing the Sky", "My Bird, Your Cage".

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան
խմբագիր՝ Միքայել Մալխասյան
Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200